

ԲԱՅԻ ԵՎ ՆԲԱ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿՐԱԾ ՄԻ ՔԱՆԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ս. Մ. ԱՆԹՈՍՅԱՆ

Գրական հայերենն իր պատմական զարգացման ընթացքում ունեցել է երեք հիմնական զբոսնորումներ՝ զրաբար, միջին հայերեն և աշխարհարար։ Գրաբարն իր ամբողջության մեջ մանրազնին քննված է, իսկ աշխարհարարն իր գրական երկու հատվածներով ահա արդեն 100 տարուց ի վեր հանգամանորեն քննվում է, առավելապես՝ արևելահայ գրականը սովետական շրջանում։ Սակայն սակավ է ուսումնասիրված միջին հայերենը, հատկապես նրա քերականական կառուցվածքը։

Մեծանուն հայագետ Ա. Այտրեյանը իր «Քննական քերականության»¹ մեջ «ռամկորեն» շնորհանուր հասկացության տակ միջին հայերենի քերականական կառուցվածքի վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր դիտողություններ է արել՝ այդ երևույթները դիտելով ոչ թե որպես զրաբարի աղավաղումներ, այլ զրաբարին ժամանակակից և նրա հետ զոյատեան ժողովրդական խոսվածքների արտահայտություններ։

Անցյալ դարի հայ լեզվաբանները այլևայլ հարցերի քննության ժամանակ ի միջի այլոց խոսել են միջին հայերենի մասին, վկայակոչել միջինհայերենյան լեզվական փաստեր, սակայն միջին հայերենն ամբողջությամբ չեն ուսումնասիրել, բացառությամբ գերմանացի հայագետ Յ. Կարստի, որի միջին հայերենին նվիրված հետազոտությունները, մասնավորապես *Historische Grammatik des Kilikisch-Armenischen* (Ստրասբուրգ, 1901) արժեքավոր աշխատությունը, դժբախտաբար, կրկնակի իմաստով զժվարամատչելի է հայագետներին, քանի որ գրված է օտար հայագետի կողմից՝ գերմաներեն և վաղուց արդեն դարձել է զրադարանային նմուշ։ Լովնանյանը առաջինը ձևական լեզվի այդ շրջանի ուսումնասիրության գործին՝ գրելով «Հետազոտությունը նախնայաց ռամկորենի վրա» ուսումնասիրությունը։ Վերահաս մահը չթողեց, որ Ղ. Հովնանյանն իր հավաքած նյութերի հիման վրա «Հետազոտությունը»-ը ավարտեր, ահա ինչու դեռ յոթանասուն տարի առաջ Ղ. Հովնանյանի գրքի հրատարակողը, նրա գրքի կարևորության մասին խոսելով, գրել է. «եվ կրադձայինը, որ չպակսեր այսպիսի ձևեր մը՝ անգործ ատաղձը գործելու և կերպավորելու Ասով... Բուն հայ բանասիրության մեծ ծառայություն մը մատուցված կըլլա։ Ռամկորեն մատենագրությունն ու լեզուն անհրաժեշտ միջին օղակն է զրաբարին ու արդի լեզվին և բացարձակապես կարևոր հայ լեզվի պատմության համար հենն ցնոր։ Ռամկորենի լավ քերականությունն հարկավոր կամուրջն պիտի ըլլա զրաբարի և արդի լեզվի քերականության»²։

Միջին հայերենի ուսումնասիրությունը խիստ անհրաժեշտ է առավելապես աշխարհարարի կազմավորման նախապատմությունը ներկայացնելու իմաստով։ Մյուս կողմից՝ միջին հայերենով գրված հարուստ մատենագրություն ունենք, մի շարք բնագավառներում շատ ավելի ճոխ ու բազմատեսակ, քան մեզ ավանդված է զրաբար մատենագրությամբ։ Ահա ինչու միջին հայերենն այսօր վերստին մեր լեզվաբանության ուսումնասիրության առարկան է։

Սովետահայ լեզվաբաններից միջին հայերենով առավել շատ զբաղվել է պրոֆ. Ս. Ղազարյանը, որն իր «Միջին հայերեն»³ աշխատության մեջ միջին հայերենի իր ըմբռնման դիրքերից փորձեց ներկայացնել մեր լեզվի այդ փուլի հնչյունաբանությունն ամբողջությամբ։ Պրոֆ. Ա. Ար-

¹ Ա. Այտրեյան, Քննական քերականություն աշխարհարար կամ արդի հայերեն լեզվի վրիննա, 1866։

² Տե՛ս Ղ. Հովնանյան, Հետազոտությունը նախնայաց ռամկորենի վրա, Վրիննա, 1897, տետր Բ, էջ Ը։

³ Ս. Ղազարյան, Միջին հայերեն, դիրք Ա, Երևան, 1960։

րահամյանն իր «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը»⁴ աշխատության մեջ ձգտել է ներկայացնել նաև միջին հայերենի դերբայները, Պրոֆ. Գ. Զահուկյանը նույնպես իր «Հայոց լեզվի զարգացման փուլերը»⁵ ուսումնասիրության մեջ համառոտակի նկարագրում է միջին հայերենն իր ամբողջության մեջ որպես մեր լեզվի զարգացման փուլերից մեկը: Իսկ ինչ վերաբերում է մեծանուն հայագետ Հ. Աճառյանին, ապա նա նույնպես հաճախ անդրադարձել է միջին հայերենին ինչպես «Հայոց լեզվի սլաոմություն», այնպես էլ «Լիակատար բերականություն» մեծարժեք աշխատությունների մեջ, սակայն, դժբախտաբար, ինքն անձամբ չի հետազոտել, այլ իր խոստովանությամբ բացառապես օգտագործել է Յ. Կարստի աշխատությունները, ահա ինչու նրա ուսումնասիրությունների այդ հատվածները Աճառյան լեզվաբանի խորությունն ու ստուգությունը չունեն:

Միջին հայերենը հանդամանորեն ի նորո ուսումնասիրվեց ակադեմիայի լեզվի ինստիտուտի հայոց լեզվի սլաոմության բաժնի աշխատակիցների կողմից. արդեն պատրաստ են մեր լեզվի այդ շրջանի հնչյունաբանության, հոլովման և խոնարհման համակարգերի, չթեքվող խոսքի մասերի, ինչպես նաև բառադիտության վերաբերյալ մենադրական ուսումնասիրությունները:

Ստորև համառոտ կերպով մենք ներկայացնում ենք բայը միջին հայերենում և նրա խոնարհման համակարգը, որը մեր լեզվի այդ շրջանում չափազանց հետաքրքրական փոփոխությունների է ենթարկվել: Նկատի ունենալով, որ XV—XVII դդ. միջին հայերենի համակարգի մեջ բարբառային ներթափանցումներն ավելի շատանում են, ըստ հնարավորին, աշխատել ենք միաժամանակ ներկայացնել, թե խոնարհման համակարգն ինչ առանձնահատկություններ ունի այսպես կոչված կիլիկյան (XII—XIV դդ.), «ղասական» շրջանում և ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել XV—XVII դդ.:

Միջին հայերենի երկու շրջանում էլ իրենց պարզ և ածանցավոր ձևերով պահպանված են գրաբարյան բոլոր 4 խոնարհումները: Հ. Աճառյանը, հենվելով Կարստի վերոհիշյալ աշխատության վրա, «Հայոց լեզվի սլաոմություն» ուսումնասիրության մեջ գրում է, որ իբր «չորրորդ լծորդության առաջին տեսակը (ուսմ) չնջվել է, մնում է միայն երկրորդ տեսակը — նում» (տես 11 մաս, էջ 248), մինչդեռ միջին հայերենի երկու շրջանում էլ Ու խոնարհման պարզ բայերի բազմաթիվ օրինակներ ունենք, ինչպես. «Եւ ջուր հանել ի գետոյ ջրելոյ... չկարէ որ աւգելուլ» (Սմ. Գունդս., Դատ., էջ 20), «Եւ ես այլ արիւն ոչ հեղում» (ՎԱ, Առականեր, էջ 64), չես քողուլ (Նղշ. Հովնթ., էջ 8) և այլն, և այլն:

Հետաքրքրական է նկատել, որ գրաբարյան Ս խոնարհման ածանցավոր բայերը փոխանցվում են Ու խոնարհման: XII—XIV դդ. հեղինակների մոտ առավելապես գտանել, իջանել, մտանել, տեսանել բայերն են ենթարկվում Ու խոնարհման, իսկ XV—XVII դդ. նաև ելանել, հասանել, այլև Ս խոնարհման դիպիւմ և քոչիւմ բայերը, ինչպես՝ կու դպնու (Ամ. Ամս., Անդ. Անպ., էջ 15, 282), քոնունք (Քուչակ, էջ 5) և այլն: Գրաբարյան Ս խոնարհման բայերն անորոշում հանդիպում են առավելապես իլ վերջավորությամբ: Այս բայերին են ավելանում նաև նորակերտ -ուիլ վերջավորությամբ կրավորական բայերը, ինչպես՝ լցուի (Գրգս. Քնն., էջ 29, 60), դատվին (Սմ. Գունդս., Դատ., էջ 47) և այլն:

Գրաբարի շորս դերբայների ռեմաց միջին հայերենն ունի 7 դերբայներ՝ անորոշ, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական, ժխտման, իսկ XV—XVII դդ. նաև -ում և -իս վերջավորություններով անկատար դերբայ:

Հայտնի է, որ ապառնի դերբայը գրաբարում -ոգ, -ի վերջավորություններ ունի. ամբողջ գրաբար մատենագրության մեջ հետազոտողները միայն մի քանի օրինակներ են ցույց տալիս, իբր ապառնի դերբայն արտահայտված լինի -ոչ վերջավորությամբ⁶, մինչդեռ միջին հայերենին առավելապես բնորոշ է ապառնի դերբայի -ոչ վերջավորությունը, հատկապես որոշիչ կիրառությամբ, ինչպես՝ ուտելոյ անասուն (Սմ. Գունդս., Դատ., էջ 80), ծառայելոյ ժամն (Ֆ., Դիվան, էջ 169) և այլն: Անցումը -ոչ վերջավորությամբ ձևից ու-ի, պատկերավոր ասած, մեկ քայլ է:

⁴ Ա. Արրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953:

⁵ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1965:

⁶ Տե՛ս Ա. Արրահամյան, Նշվ. աշխ., էջ 148—150:

միայն: Հայտնի է, որ դրաբարյան -ոյ վերջավորությունը պատմական հնչյունափոխությամբ դարձել է ու: Ինչպես նշում է Մ. Արեղյանը⁷, -ոյ վերջավորությունը դրաբարում բաղաձայնից առաջ արտասանվում էր ու. դրաբարյան անուշ, ոյծ, շոյտ, բոյք և այլ բառեր աշխարհարար դրականին են անցել անուշ, ուծ, շուտ, բուք (մատ) դրությամբ: Ապառնի դերբայի բոլոր ձևերի մեջ -ու վերջավորությունն է իշխում միջին հայերենում թե՛ դերբայական և թե՛ ժամանակակերտ գիրառությամբ, ինչպես՝

«Երբ որ յէղուց մեռնելու ես, քեզ ճար արա, ի՞նչ կու նայիս» (Ֆր., Դիվան, էջ 267):

Գրաբարի անցյալ դերբայը նույնպես որոշ փոփոխություններ է կրել.

ա) Միջին հայերենում չենք հանդիպում եմ բայի ստորադասական ձևերով կազմված բաղադրյալ ապառնի ժամանակի, այսինքն՝ չկան մեռնալ իցէ, ժողովեսալ իցեմք և այլ ձևեր:

բ) Միջին հայերենում չենք հանդիպում տեսեալ է իմ, լուեալ էր Բո և առավելապես ընրեցեալ իցէ նորա ձևերի, ինչքան էլ որ խոսքի շարադրանքը դրաբարախառն լինի:

Վերևի ձևերի կիրառության բարեբաշխության մասին արժե մեջ բերել հետևյալ փաստը, որ նկատել է Ղ. Հովնանյանն իր վերոհիշյալ աշխատության մեջ: Հայոց Գագիկ թագավորի և մետրոպոլիտ Մարկոսի հայտնի միջադեպի շարադրանքում իրար ժամանակակից երեք հեղինակներ միևնույն նախադասության բայը տարբեր ձևով են արտահայտում. այսպես՝ «Եւ իրրև ընդ դինիս մտին, ասէ թագաւորն. Լուեալ է իմ, թէ ունիս դու շուն ազնիւ» (Կիրակոս Գանձակեցի): «Յայնժամ սկսաւ ասել Գագիկ ցկիւռ Մարկոս, եթէ՛ Լուեալ եմ եթէ քո շուն զօրաւոր կայ» (Մատթեոս Ուռհալեցի): «Իրրև ճաշեցին և ուրախացան ի դինի, ասէ Գագիկ ցՄարկոս. Լսել եմ թե մեծ շուն եւնիս և կամիմ տեսնուլ զնա» (Սմբատ Գունդստար):

Եզրակացությունը սլարգ է. առաջին երկու հեղինակները դրել են դրաբար, իսկ Գունդստարը՝ միջին հայերենով:

դ) Միջին հայերենում չենք հանդիպում անցյալ դերբայի դիմավոր իմաստով կիրառությանը, մի բան, որ հատուկ էր դրաբարին, ինչպես՝ «Սա ի մէջ սկայիցն քաջ և երեւելի լեալ» (Խորենացի, I, Ժ):

Միջին հայերենում կա նաև -ել, -եր վերջավորություններով ձևավորված վաղակատար դերբայ: -ել վերջավորությունն, անկասկած, առաջացել է դրաբարի անցյալ դերբայի -եալ վերջավորությունից՝ հայերենի համար շատ սովորական եա > ե հնչյունափոխությամբ, ինչ որ դտնում ենք ցորեան — ցորեն, բարբառային՝ լեարդ — լերդ և բաղմաթիվ այլ բառերում: Մեկ անգամ որ առաջացել էր -ել դերբայական մասնիկը, լ > ր ձայնորդների հնչյունափոխությամբ կազմավորվեց նաև վաղակատարի -եր վերջավորությունը: XIII դ. վաղակատարի այս ձևերը քաղաքացիական իրավունք են ստանում. վաղակատարով հանդավորված են բանաստեղծություններ, ինչպես՝

«Սի՛րտ իմ, ընդէ՛ր ես խրոովել,
Ա՛շք իմ, ընդէ՛ր ես հաւառել,
Խե՛ղք իմ, ընդէ՛ր ես ճառառել,
Մի՛տք իմ, ընդէ՛ր ես շիւարել» (Ֆրիկ):

Այսպես և -եր վերջավորությամբ.

«Ի յերկնաւորաց դասուց
Սառայէլ դերեան էր շրջեր.
Ի յերկնից անդունդս իջեր
'Ի ի յուսոյն խաւար մնազեր
ՁԱղաւմ ի դրախտէն զաներ...» (Հովհ. Երզնկացի):

Մեր լեզվի այս շրջանում վաղակատարի -ել և -եր վերջավորությունները կիրառվում են հավասարապես. այս կամ այն ձևին նախապատվություն տալու ձգտում չի նկատվում, հաճախ այդ երկու ձևերը հանդիպում են միևնույն նախադասության մեջ. ինչպես՝ «Դիւանէն ասէ, թէ այս ջերմանս պատճառն այս է՝ որ ի շատ դատելուն հոգին տաղնապէր է և տալցեր է, և իր տաքութենէն զայն ջերմս յերևան է բերել» (Մ. Հերացի, էջ 27):

Միջին հայերենում հարակատար դերբայը ևս բերականական իմաստով ամբողջացած երեւելոյթ է. նա հանդես է գալիս որպես դոյական, ածական, և առավելապես՝ որպես ժամանակա-

⁷ Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 116:

կերտ դերրայ, ի դեպ, հարակատար դերրայի — ան վերջավորությամբ տարբերակը հայերենի բոլոր դրսևորումներում էլ՝ ընդհանուր խոսակցական, դրական լեզու թե բարբառներ, ամենալայն կիրառություն ունի։ Բացառություն չի կազմում և գրաբարը. բավական է ծանոթանալ պրոֆ. Ա. Արրահամյանի վերոհիշյալ աշխատության համապատասխան բաժնի փաստերին (էջ 204—215)։ Համոզվելու համար, որ գրաբարում ևս հարակատար դերրայաձևը թե՛ իրրև գոյական, ածական ու մակբայ և թե՛ իրրև բաղադրյալ ժամանակի կազմի մեջ մտնող դերրայ լայն կիրառություն ունի։ Ուրիշ հարց է, թե ինչու, այնուամենայնիվ, հարակատար դերրայաձևը գրաբարում բայական հատկանիշով չի զիտակցվում, այլ արժեքավորվում է որպես գոյական, ածական, մասամբ և՛ մակբայ։

Միջին հայերենի 1-ին շրջանում ներգործական սեռի բայերի հարակատար դերրայն արտահայտում է կրավորականի իմաստ՝ առանց կերպային մասնիկի, ինչպես՝

«Գրած է (— գրված է) ի դիրն աւետարեր»
 «Է սրբած (= սրված է) զետ հայելի» (Ն. Շնորհալի)։
 «Յաշխարհիս այլ զեղեցիկ իրք չէ տեսած (= տեսնված չէ),
 Զինչ լինի տունն հընազանդ մէկ հրամանաց» (Կ. Երզնկացի)։

Իսկ XV—XVII դդ., ի տարբերություն նախորդ շրջանի, մի շարք հեղինակների մոտ ներգործական սեռի բայերի հարակատար ժամանակների կիրառության բազմաթիվ օրինակներ ենք գտնում. ինչպես՝

«Ոչ ըղլուր օրն գիտեմ, ոչ ըզկիրակին,
 Զարկած է (= զարկել է) զիս շամփուրն բռնած կրակին» (Ն. Քուշակ)։
 «Այսօր... սիրտս ուրախութիւն կանէ,
 Զէրայ իմ սիրելունանէ
 Շատ բարև ու գիր են բերած (— բերել են) (Ն. Հովնաթան)։

Ներգործական սեռի բայերի հարակատարն իր բուն իմաստով կիրառելը պահանջ առաջացրեց, որ կրավորական իմաստով օգտագործվելու դեպքում բայաձևն ստանա կրավորականի հատուկ մասնիկ։ Եվ իրոք, ի տարբերություն նախորդ շրջանի, XV—XVII դդ. հեղինակների մոտ հարակատար դերրայի՝ թե՛ դերբայական և թե՛ ժամանակակերտ կիրառությամբ կրավորական ու չվ մասնիկով դրսևորված բազմաթիվ ձևեր ենք գտնում. ինչպես՝ «Յառաջի տարաճան կու լինի այս խառնուած (= խառնված) դեղս» (Ամ. Ամս.)։ «Զարդարել ես զինչ գարնան բացւած վարդ» (Ն. Հովնաթան)։ Ապա և. «Եւ իր ուծն Բ բնութիւնն խառնուած է» (Ամ. Ամս.)։ «Զաքարէս... մեր հայրենի տունն վեր կալայ, նորն շինեմ, զերայ շատուց շինված էր» (Զ. Ազուլեցի, Օրագրություն)։

Միջին հայերենում հետաքրքրական դրսևորումներ ունի ժխտման դերբայը, որով կազմվում են ինչպես սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար, այնպես էլ ստորադասականի, այսօրվա ըմբռնմամբ՝ պայմանականի ապառնի և անցյալի ապառնի ձևերը։ Միջին հայերենում ժխտման դերբայը ձևավորվում է անորոշ դերբայից և չ ժխտական մասնիկով արտահայտված օժանդակ բայի ներկա և անցյալի ձևերից. ինչպես՝ «Զի ամենեկն օրէնք չէ ի տալ ([թույլ] չի տալիս), որ բիճն երէց լինի» (Սմ. Գունդս.)։ «Ասի առակաց, թէ գալին ձագն բոնեցին... և ասեն՝ ասայ սեչ»։ Նա ասէ. ես կու երթամ. դի՛հ անցաւ, այլ չեմ ի ճասնիլ (= չեմ հասնի)» (Վ. Այդեկցի)։ «Ասէ այրն. ո՛վ գայլ, զիմ իշուկս կորուսեալ եմ և չեմ գտնուլ (= չեմ գտնում)» (Այգեկցի)։ «Մահըն կուգայ յանկարծակի, այլ չի բողոլ (— չի թողնի), որ նա շընչայ» (Ֆրիկ)։

Վերևի առաջին երկու օրինակներում անորոշ դերբայը հանդես է եկել ի նախդիրով, մինչդեռ վերջին երկու օրինակներում՝ առանց ի նախդրի։ Այս նույն ձևով ժխտական ունենք նաև անորոշ ի թորդի Բ-ի հնչյունափոխված ձևով, ինչպես՝

«Շուն եմ առ դուրըս քո քաղցած.
 Չեմ ի ճայցեր (= չեմ հայցում) ըզհաց մանկանց» (Ֆրիկ)։
 «Ֆրիկ, շունիս խելք իմաստի, էր չես լըսեր (= չես լսում) դու խրատի»։

Այսպիսով, միջին հայերենում ժխտման դերբայի դրսևորումները կարելի է հետևյալ չորս կետերի տակ խմբավորել.

ա) Ի նախդիրով արտահայտված անորոշ դերբայով և ևս օժանդակ բայի ժխտական ձևերով (չէի ի տալ, չեմ ի հասնել) :

բ) Ի նախդիրով արտահայտված անորոշ դերբայի և լծորդի Բ-ի հնչյունափոխված ձևով և ևս օժանդակ բայի ժխտական ձևերով (չեմ ի հայցեր) :

գ) Անորոշ դերբայով (առանց ի նախդրի) և ևս օժանդակ բայի ժխտական ձևերով (չեմ գտնուլ, չի լողուլ) :

դ) Անորոշ դերբայի և լծորդի Բ-ի հնչյունափոխված ձևով (առանց ի նախդրի) և ևս օժանդակ բայի ժխտական ձևերով (չես լսեմ) : Արդ, ի՞նչ ծագում ունեն այս կազմությունները Դիտված է, որ հայ լեզվամտածողության մեջ ներկա և անցյալ անկատար ժամանակները դործողության մեջ լինելու (ներգոյականի) դադարաբաժնի արտահայտումը ինչպես ցույց է տալիս պրոֆ. Ա. Ղարիբյանը⁸, այս լեզվամտածողությունը հատուկ է հայերենի բոլոր դրսևորումներին։ Միջին հայերենում ունենք փաստեր, որոնք վկայում են, թե վերոհիշյալ կազմությունները միայն ժխտական ձևերին հատուկ չեն եղել։ Այսպես՝ Մ. Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» աշխատության մեջ գտնում ենք Ի նախդիրով և անորոշ դերբայով հաստատական ձևերի կազմության հետևյալ օրինակները. «Եւ երբ հիւանդութիւն եփի, երակ առ, զի մաղձն ի յայլիլ լինի» (էջ 119)։ «Խաւիթի զիրական և զառանձին զործն է ի ասել. զոր անուանեն յատուկ» (էջ 133)։ Իսկ Վ. Այգեկցու առակներում ունենք հետևյալ առավել հստակ օրինակը. «Իբրեւ եհաս առաջի դայլոյն ասէ աղուեսն ի միտս իւր. դառնամ և տեսնում զխէչափան, թէ ի զալ է» (Առակներ, II, էջ 38)։

Ա. Այտընյանը նման օրինակներ է նկատել և Հովհան Մամիկոնյան պատմիչի մոտ. «Յոյնք էն ի գալ. Յայրէլ էլ ի տալ» (Քնն. քերական, Նախշով. էջ 126)։

Վերևի բոլոր ձևերը ներգոյականի իմաստի դրսևորումներ են. դրաբարում ներգոյականի իմաստը եզակի լիովն արտահայտվում էր տրականի կամ հայցականի վրա ի նախդրի ավելացումով։ Մեր օրինակներում ի նախդրին ավելացել է հայցական ձևերի վրա, բանի որ դրաբարում անորոշ դերբայը ենթարկվում է ո վերջադրական հոլովման, իսկ այդ կարգի բառերի ներգոյականի իմաստն արտահայտվում է եզակիում հայցականի վրա ի ավելացնելով։ Մյուս կողմից՝ վերևի օրինակներում կարելի է տեսնել, որ ժխտականի նույն ձևը կարող է դրվել նաև պայմանականի իմաստով։ Սա ևս խորթ չէ հայերենի ոգուն։ Ինչպես վկայում է Ա. Այտընյանը, «Մատենադարանի սկիզբները՝ լույս ընտիր զբոց մեջ (ընդգծումը մերն է — Ս. Ա.) բավական հաճախ է՝ եկ առաքեմ զքեզ. զնամբ. եկ երթամք շրջմբ. լույս անիծանէ. Ասեմք զի իջցէ (սրտինք որ իջնայ)»⁹։ Ահա և մի օրինակ Նղիշեից. «Յորժամ արգելուս (= արգելես) և փակես (= փակես) զամենեւեւն ի հեռաւոր օտարութեան, կաաաւրիս (= կկատարվեն) խորհուրդք կամաց քոց»։ Այս մասին առավել մանրամասն պիտի խոսվի ստորև, միջին հայերենի ներկա ժամանակի հարջը քննելիս։

Դժվար չէ նկատել, որ միջին հայերենի ժխտման դերբայի վերևի ձևերը սերտ աղերսակցություն ունեն արևմտահայ գրականի սահմանականի ներկա, անցյալ անկատար, այլև պայմանականի իմաստով կիրառվող ժխտական ձևերի հետ։ Մյուս կողմից՝ ծագումնաբանորեն նույն կազմությունն ունի արդի արևելահայ գրական լեզվի պայմանականի ժխտականը, որ մեր դարասկզբին նույնիսկ հայ դասական հեղինակներն օգտագործում էին (սօքիմ սիրիլ քեզ էլ, Զ. Թումանյան)։

Հետաքրքրական է իմանալ, թե ժխտման դերբայի վերևի ձևերից ո՞րն էր ավելի շատ օգտագործվում։ Հաշվումները ցույց են տալիս, որ առավել շատ օգտագործվում են I, III և IV ձևերը. նշանակում է՝ ի նախդրի ընկալումը թուլանում է։ Սակայն ակնբախ է, որ ձգտումը դեպի IV ձևն է, այն է՝ օժանդակ բայով և անորոշ դերբայի Բ-ի հնչյունափոխված ձևով, մի բան, որ արևմտահայ գրականում ընդհանուր և տիրապետող միակ ձևն է (չեմ լսեր — չեմ լսում, չեմ սորվիր — չեմ սովորում և այլն, և այլն)։

Միջին հայերենի շրջանում առավել հետաքրքրական երևույթ է անկատար դերբայի առկայությունը։ Առաջին շրջանում, այն է՝ XII—XIV դդ., — ունի կամ — իս վերջավորությամբ անկատար դերբայաձևեր չեն հանդիպում։ Եվ դա հասկանալի է. բանի որ այդ շրջանի մատենագրությունը բացառապես կիրիկյան է։ Վաղուց ի վեր հայագիտությանը հայտնի են եղած հետևյալ փաստերը.

ա) XII դարի հայ բժշկապետ Մ. Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» (Վենետիկ, 1832)

⁸ Տե՛ս Ա. Ղարիբյան, Լեզվական մտածողության տարատեսակները հայերենում, ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու», հատ. II, Երևան, 1947։

⁹ Ա. Այտընյան, նշվ. աշխ., Քերականություն, էջ 74։

աշխատության մեջ. «Ապա թէ հիւանդին թպտիրն մաշում լինի, կերակուր չոր չէ պատեհ, նա ընծային այլ ցեղ նիթ» (էջ 61)։

բ) Վարդան Արևելցու (XIII դարի պատմիչ) «Պատմութիւն տիեզերական» (Մոսկվա, 1861) աշխատության մեջ. «Ասացի թէ զինչ քրիստոնեայ կայ և արքայունք ընդ ծով և ընդ ցամար՝ ամենու սիրտն քեզ հետ լաւ են և քեզ աղօթք են առնում» (էջ 207)։ Վերջերս բերվում է նաև նույնահայտ հետևյալ օրինակը. «Դուրս ի, մուկն ցեթեց ի վերայ լուսանցին»¹⁰։ Հետաքրքրական է, որ վերևի վկայությունները հայ բանասիրության մեջ տարբեր և իրար հակոտնյա արժեքավորում են ստացել։ Ա. Այտընյանը - ում վերջավորությամբ ներկա ունեցող «զավառականների» մասին խոսելիս I-ին վկայությունը գնահատում է որպես - ում վերջավորությամբ անկատար գերբայի նախաձև¹¹։ Իսկ երկրորդ փաստը հետևյալ կերպ է գնահատում Մ. Աբեղյանը. «Դա ցույց է տալիս, որ արևելյան բարբառների մեջ XIII դարից առաջ արդեն այդ ձևը հաճախված պիտի լիներ իբրև սահմանական ներկայի մի բաղադրիչ մաս, որպեսզի «առնելում եմ» ձևը դառնար «առնում եմ»։ Եթե «լառնել եմ», «առնելում եմ» ձևերը զուգակարգ էին զգացվել իբրև մի դարձված՝ «առնում եմ» ձևն այլևս դարձված չէ, այլ լուկ խոնարհման մի բաղադրյալ ձև. որովհետև դա այլևս չի կարող զգացվել իբրև անորոշ գերբայի ներդրական «եմ» բայով»¹²։ Իսկ բանասիրական գիտությունների գոկտոր Ալ. Մարգարյանը գտնում է, որ մաշում արաբերենից փոխառված բառ է, որ կնշանակի շարաղետ, շարաբաստիկ, շարագուշակ. դործածական է նաև պարսկերենում ու թուրքերենում, ուստի I վկայությունը պետք է կարդալ և հասկանալ հետևյալ կերպ. «Ապա թէ հիւանդին (=հիվանդի համար) թպտիրը (=հիվանդության դարմանումը) մաշում (=շարաղետ) լինի»¹³։ Այսպիսով, արաբերենից փոխառված բառերի թիվն ավելանում է մեկով։ Այս բացատրությունը ճշտվում է հետևյալ փաստով. թիսկ Փնտուխտարն էր մօրուօք և ունէր մէշում (=վատ) ձի եւ Սղուրն էր ձիոյն, ետ ի Փնտուխտարն, տղայ և ձին աղէկ։ Երբ իմացան թէ հասանել կամի Տաթարն և զերկուսն ըմբռնել, Սղուրն իջեալ ի տաճիկ եւ ինքն ելաւ ի վատ ձին» (Ղշնի, էջ 245)։

Իսկ ինչ վերաբերում է երկրորդ վկայությանը, ապա Ա. Մարգարյանը գտնում է, որ լեզվական այդ փաստը մեզ ավանդվում է 1589 թ. (Մատենադարան, ձեռագիր N 1770), իսկ Վ. Արևելցու երկի նախորդ դարերի ձեռագրերում չկա։ Մյուս կողմից՝ N. N. 1518 (1591 թ.), 1478 (1657 թ.), 4584 (ժէ դ.) ձեռագրերում «աղօթք են առնում»-ի փոխարեն ունենք «աղօթք են յառնում»։ Ապա հեղինակը եզրակացնում է, որ ձեռագրային հիշյալ տվյալներն ու անհամապատասխանությունները ցույց են տալիս, որ իրական հիմք չկա «աղօթք են առնում» ձևը XIII դ. լեզվական փաստ դիտելու կամ իբրև այդպիսին ճանաչելու համար¹⁴։

Ինչպես տեսնում ենք, վկայված փաստերն արժեքավորելու համար շատ բան կախված է ընկալումից։ Ծիշտ է, որ վերոհիշյալ փաստերը մեզ բավարար հիմք չեն կարող տալ պնդելու, որ մինչև XV դարը - ում վերջավորությամբ անկատար գերբայաձևն ինչ-որ խոսվածքի համար տիրապետող է եղել։ Սակայն այն էլ պետք է նկատի ունենալ, որ այդ շրջանի բոլոր ձեռագրերն ու նրանց հիշատակարանները ուշի-ուշով չեն ուսումնասիրված և որ մատենագրության մեջ տիրապետել է այսպես կոչված «կիլիկյան» զրականը։ Հիշեցնենք, որ խոսքը ոչ թե Ում ճյուղի խոսվածքների առկայության մասին է տվյալ դարաշրջանում, այլ միայն վկայվածության։ Այնպես որ պետք է հուսալ, որ հետագա հայտնաբերումներն այս հարցի վրա կարող են առավել շատ լույս սփռել։

Դրությունը բոլորովին տարբեր է միջին հայերենի II շրջանում։ XVI դ. կեսերից սկսած իրար ժամանակակից և միևնույն բարբառի ներկայացուցիչ երկու հեղինակներ լայնորեն օգտագործում են - ում և -իս վերջավորությամբ անկատար գերբայի, ինչպես նաև ներդրական ոլովի բաղադրիչ ձևեր։ Նրանք են՝ Նաղաշ Հովնաթանը (1661—1722) և Զաքարիա Աղուլեցին (1630—1691)։ Այս վերապահությունից երևում է, որ այս շրջանի մյուս հեղինակների մոտ - ում և -իս գերբայական վերջավորություններով ձևերի չենք հանդիպում, քանի որ նրանք բոլորն էլ «կիլիկյան» զրականի սահմաններից ներս են ապրել ու ստեղծագործել։ Իսկ Ն. Հովնաթանը Ում ճյուղի բարբառի ներկայացուցիչ է և ապրել ու ստեղծագործել է Ում ճյուղի բարբառներով խոսող

¹⁰ «Ժեղ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, կադմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 358։

¹¹ Տե՛ս Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 104։

¹² Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 314։

¹³ Տե՛ս Ա. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 471։

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 472։

միջավայրում (Շոտթ, Ագուլիս, Թիֆլիս, Երևան, Էջմիածին)։ Իսկ ինչ վերաբերում է Ջաբարիա Ագուլեցուն, ապա անունը վրան է՝ Ագուլեցի։ Ահա մի քանի օրինակներ.

«Նուիրիմ կեանք, արև՝ ի մէջ երկրումս,
Շատ կարօտ թողիր իմ տարթի սրտումս» (Ն. Հովնաթան)։
«է՞ր ես կարմիր երեսդ ծածկում,
Չարսաւդ վերադ հաւաքում,
Նաղաշին սիրտն ես տալակում»։

Եվ կամ՝ «Այս երկրումս լուս քրինձ կնի»։ «Աղամիրի Բ տղէն որ մնաց, մեծն Շմաւոն է, որ այս պայքարումս անունն զրաժ աստ տեղ կայ» (Ջ. Ագուլեցի)։ Ն. Հովնաթանն ունի նաև -ման15 վերջավորութեամբ անկատար դերբայ. Ինչպես հայտնի է, սա Նոր-Ջուղայի բարբառի հատկությունն է. և իսկապես, Ն. Հովնաթանն այն օգտագործում է ջուղայեցու ուղղակի խոսքի մեջ.

«Ջուղայեցիք անք. կու պարծենք,
Մեր մեր լեզուն զրոց կարծենք,
...Դաշտըցիք դատ նանաչման շեն (=չեն ճանաչում, չեն իմանում),
Խոր անումըն՝ հայր կու կանչեն.
Այժ ան ասում, խաշվի թա՝ էծ.
Գրոց լեզուն իմաման շեն (—չեն իմանում)»։

Ի տարբերություն արևելաձայն գրականի, անկատար դերբայի -իս վերջավորութեամբ ձևերը ժամանակակերտ են, կազմում են գլխավոր բաղադրյալ ժամանակներ.

«Նոր ծաղկեցաւ ծառն, գարունն էհաս, է՞ր ես ինձնէ հեռանալիս,
Նազանի քաղցրիկ եսր, բարով դո՛ւ էլ գաս, է՞ր ես ինձնէ հեռանալիս»։

Սա Ագուլիսի բարբառի առանձնահատկությունն է։ Ս. Սարգսյանցը ևս, որ ուսումնասիրել է Ագուլիսի բարբառը, իր աշխատության16 մեջ տալիս է -իս վերջավորութեամբ դերբայով կազմված ներկա ժամանակի մի շարք ձևեր (չի նընչէլիս, մընալիս և այլն, և այլն)։ Պատահական չէ, որ -ում վերջավորութեամբ ներգոյականի ձևերն ու անկատարի դերբայաձևերը իրար կողք-կողքի ենք վկայակոչում, քանի որ, հակառակ տրված այլ բացատրությունների, մենք ընդունում ենք, որ այդ երկու երևույթների ծագումնաբանությունը նույնն է։ Այսընյանն իր «Քննական քերականության» մեջ ճիշտ կերպով բացատրել է, որ հայերենի բարբառների -ում վերջավորութեամբ ներգոյականը զրաբարում տրական հոլովում -ում վերջավորություն ունեցող բառերի (առավելապես՝ թվականներ, դերանուններ և որոշ ածականներ)՝ ի նախդիրով ներգոյականի գաղափարի կազմության ձևերի անմիջական շարունակությունն է։ Իսկ որ անկատար դերբայի -ում վերջավորությունն էլ կարող էր անորոշի ներգոյականից կազմվել, լավագույնս ապացուցվում է Հավարիկի բարբառում պահպանված խաղալում, գրելում, կարդալում ձևերով։ Հասկանալի է, որ -ում վերջավորութեամբ անկատար դերբայաձևից միայն սահմանականի ներկա և անցյալ անկատար ժամանակները կարող էին կազմվել, քանի որ հայ լեզվամտածողութեամբ այդ ժամանակները գործողության կամ եղելության մեջ լինելու գաղափար են արտահայտում։ Ահա ինչու մենք չենք բաժանում Ալ. Մարգարյանի այն կարծիքը, թե՝ «ում-ով անկատար և նրանից կազմված ներկա ու անցյալի անկատար ժամանակները ծագումնաբանորեն կարող են կապվել անորոշի միայն մի հոլովածնի հետ, որ է հեճ նախդիրով անորոշը կամ աներևույթ ներգոյականը» (ընդգծումը իրենն է)17։ Եվ կամ՝ «-ում-ով անկատարը ծագումնաբանական ոչ մի կապ չունի -ում-ով ներգոյականի հետ և սերում է բացառապես աներևույթ ներգոյականից»18, իսկ ի՞նչ ճանապարհով. ահա ըստ հեղինակի անցման ճանապարհը՝ ի հասնուլ եմ>հասնուլ եմ>հասնում եմ, ի գնալ եմ>գնալ եմ>գնում եմ19։ Մեր կարծիքով, այս անցումը հիմնավորող անառարկելի փաստեր հայերենում չի կարողացել գտնել հեղինակը։

15 -ման վերջավորությունը, ըստ երևույթին, ոչ թե փոխառյալ է պարսկերենից, այլ ումն վերջածանցով բառերի տրականով արտահայտված ներգոյականի ձև։ Այս մասին տե՛ս Ա. Արքա՝ ա մ յ ա ն , Նշվ. աշխ., էջ 99—103։

16 Ս. Սարգսյանց, Ագուլեցոց բարբառը, Մոսկվա, 1883։

17 Ա. Մարգարյան, Նշվ. աշխ., էջ 482։

18 Նույն տեղում, էջ 493։

19 Տե՛ս նույն տեղում, էջ 485։



Շատ հետաքրքրական փոփոխություններ են կատարվել նաև խոնարհման համակարգում: Գրաբարի 3 եղանակների դիմաց միջին հայերենն ունի 5 եղանակներ: Ավելացել են ըղձական, պայմանական և հարկադրական եղանակները: Մյուս կողմից՝ անդործածական են դարձել գրաբարի ստորադասական եղանակի բայաձևերը, ինչպես նաև հորդորական հրամայականը, թեև որպես գրաբարաբանություն այս շրջանում տեղ-տեղ վերահիշյալ ձևերը հանդիպում են:

Սահմանական եղանակում ավելացել են 6 նոր ժամանակներ՝ համապատասխանաբար կազմված ապառնի, վաղակատար և հարակատար դերբայներով, որոնց մասին դերբայների քննության բաժնում արդեն խոսեցինք: Ուստի հնչյունական, ձևաբանական, բառական ու շարահյուսական բոլոր փոփոխությունների մեջ ամենակարևորն ու միջին հայերենը դիմորոշողը սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատարում կատարված փոփոխությունն է: Միջին հայերենում ներկան և անկատարը, ուստի և պայմանական ապառնին ու անցյալի ապառնին կազմվում են կու-ով: Ինչպես որ բարբառների ճյուղային պատկանելիությունը որոշողը հիմնականում ներկայի ու անցյալ անկատարի ձևաբանական կազմությունն է, այնպես էլ գրաբարն ու միջին հայերենը սահմանադատողը կու մասնիկն է, որ Ա. Այտընյանի ճշգրիտ բնութագրումով «արդի լեզվին ղլխավոր կերպարանափոխ ընդդեմ եղած է»: Գրաբար լեզվով գրված մեծածավալ գրականության մեջ թե՛ հին ժամանակներում և թե՛ ընդհուպ մինչև մեր օրերը չի կարելի գտնել կու մասնիկով կազմված ոչ մի բայաձև, մինչդեռ միջին հայերենով (թեև ոչ և գրաբարախառն) պրոզ ոչ մի հեղինակ չի խուսափել այս մասնիկից՝ սկսած XII դարից՝ Մ. Հերացուց ու Ն. Շնորհալուց մինչև XVII դ. տաղերգուները:

Բնականաբար հարց է ծալում, թե ինչո՞ւ, ե՞րբ և ինչպե՞ս ստեղծվեց կու մասնիկը: Այս բոլոր հարցերին Արսեն Այտընյանը պատասխանել է միայն իրեն հատուկ գիտական մանրակրկիտությամբ և խորաթափանցությամբ. այդ տեսակետն էլ ընկած է մեր շարադրանքի հիմքում: Վերևում ասացինք, որ դեռևս V դարում, նույնիսկ Երուն ընտիր գրոց մեջ՝ գրաբարի ներկա և անցյալ անկատար ժամանակները գործածվում էին միաժամանակ ստորադասականի ապառնիների փոխարեն, քանի որ, ինչքան էլ զարմանալի լինի, գրաբարը ստորադասականի անցյալի համար առանձին ձևեր չունեն, այսինքն՝ այսօրվա ըմբռնմամբ գրաբարում չկար հատուկ ձև գրելի, կգրելի, պիտի գրելի բայաձևերը արտահայտելու համար. և այդ թերին լրացվում էր սահմանականի անկատարի գործածությամբ. ինչպես՝ «Եւ զմիսն եթէ սիրտ ուրուք առնույր (=ախորժեք) և ուտէր (=ուտեր)՝ Ո՞ջ վնԱՍէՐ (=չէր վնաս(վ)ի), Եզնիկ, I, ԺԵ): «Բայց թէ գիտէի (=գիտենայի, իմանայի) թէ յայսմ հետէ կայցէ յուխտին իմում... մեծարանօք առնալէի (=կարձակեի) զնա», (Բուզանդ, IV, ԾԴ): Սահմանականի անցյալ անկատարն իբրև ստորադասական գործածելու այս ստիպումն ազդեց նաև ներկայի վրա. և հայոց լեզվի մեզ հայտնի հնագույն վկայություններում սահմանականի ներկան էլ գործածվում է իբրև ստորադասական, ինչպես վերևում Եղիշեից բերված օրինակում էլ տեսնում ենք: Այսպիսով, գրաբարի ներկան և անկատարն օգտագործվում էին միաժամանակ ստորադասականի ապառնիների փոխարեն: Հետագա դարերում, գրաբարի ստորադասականի ձևերի գործածությունից դուրս գալու հետևանքով խառնակություն և անորոշություն առաջացավ լեզվի մեջ՝ նույն բայաձևում (սիրեմ — սիրում եմ, սիրեմ, կսիրեմ, — սիրէի — սիրում էի, սիրեի, կսիրեի, պիտի սիրեի) իրարից էապես տարբեր եղանակների ձևերի նույնանալու պատճառով, մինչդեռ լեզվի զարգացմանը բնականորեն հատուկ է պարզեցումը: Անհրաժեշտությունն առաջ բերեց նոր մասնիկ՝ կու, որ, դրվելով իմաստով ստորադասական դարձած ներկա և անկատար բայաձևերի վրա, սահմանադատեց սահմանականի ժամանակներն ստորադասականից: Կու մասնիկը մեր դրավոր աղբյուրներում առաջին անգամ երևում է XII դարում, սակայն, ինչպես անշուրտ են կատարում է Ա. Այտընյանը, «անտարակույս է, որ նույն ատեն հանկարծ չլուսավ, ինչպես որ հարկավորությունն ալ հանկարծ չէր զգացված»²⁰: Այնուհետև Այտընյանը, բնականով այն հարցը, թե ի՞նչ բառ է այս մասնիկը, առաջ է քաշում այն տեսակետը, թե «հնոց կու մասնիկը՝ կայ ու բառերուն բաղադրությունն է» և ամփոփմամբ՝ սղումով ասված է կ'ու նայի՝ իսխանակ կայ ու նայի. որ հետո ընդհանրացման օրենքով տարածվել է նաև մնացած դեմքերի վրա՝ կու լսենք, փոխանակ՝ կանք ու լսենք, կու տեսանէք, փոխանակ՝ կայր ու տեսանէր և այլն: Մեկ անգամ որ կու մասնիկը ներկայի և անկատարի համար եղանակիչ էր դարձել, ու-ի հնչյունա-

²⁰ Ա. Այտընյան, նշվ. աշխ., Քերականություն, էջ 75—76:

փոխությունը դարձավ կը, կի, ապա և՛ կ՝, կ²¹։ Այստեղյանի այս տեսակետն անվերապահորեն ընդունում է Հ. Աճառյանը։

Կու մասնիկի ծագման մասին հայ և օտար հայագետները տարբեր բացատրություններ են տվել։ Առավել հետաքրքրական է Մ. Արեղյանի կարծիքը, ըստ որի այդ մասնիկն առաջացել է հախաձև կոյ մասնիկից, մի անկախ բառ, որ նշանակել է «ահա»²²։ Իսկ Ալ. Մարգարյանի կարծիքով կու առաջացել է կամիմ բայի ներկայի եզակի 3-րդ դեմքի կամի բայաձևից՝ կ-ին հաղելված ու հնչյունով, որ արտասանական բարենշյունության համար է արված²³։

Կու մասնիկի ծագման վերաբերյալ Այստեղյանի տված բացատրությունը ճշտվում է հայ բարբառների լեզվական փաստերով։ Այսպես, Կեսարիայի բարբառում ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմվում են զա մասնիկով, ինչպես՝ զա դիրեմ (=գրում եմ), զա դիրեմեմ (=գրում եմք), զա դիրեմի (=գրում էի) և այլն։ Սա կամ բայի եզակի երրորդ դեմքի կալ>զա բայաձևն է, որ համաբանությամբ տարածվել է նաև մյուս դեմքերի վրա։ Դրանում համոզվելու համար վերցնենք ներկա ժամանակի ժխտականի կազմությունը.

չիքամ գիրեմ (—չէի գրում)	չիքանք գիրենք
չիքաս գիրես	չիքաք գիրէք
չիքա գիրէ	չիքան գիրէն ²⁴

Դժվար չէ համոզվել, որ չիւամ, չիւաս, չիւա առաջացել են չ+կամ, չ+կաս, չ+կայ ձևերից՝ չ-ի ազդեցությամբ կատարված կ>լ հնչյունափոխությամբ։ Մյուս կողմից՝ Կեսարիայի բարբառում ըզձականն ու պայմանականը բոլորովին տարբերվում են ներկայից. առաջինը գրաբարյան ներկան է (գիրեմ—գրեմ), իսկ երկրորդը կազմվում է կը եղանակիչով (զը գիրէմ=կգրեմ)։ Նկատենք, որ Ա. Այստեղյանը իր ժամանակին նկատել է միջին հայերենի կու<կայ ու մասնիկի և հայերեն բարբառների ներկայի կա(յ) մասնիկի աղերսակցությունը՝ գրելով. «Կուցե առով այն երևույթն ալ կարենայ մեկնելի՛լ՝ որ զապառական լեզվաց մեջ կսվի՝ Տեսնէ կա, եայի կա, իսուայ կայ»²⁵։ Իսկ Հ. Աճառյանը գրում է. «Դրականապես հաստատելու համար, թե կու ծագում է կալ բայից՝ մեզ իբրև լավագույն ապացույց ծառայում է Կեսարիո բարբառի բացասականի կազմությունը։ Այստեղ մենք ունենք՝ չկամ կարգում, չկաւ գրեի «չէի գրում», չկաս գրեի «չէիր գրում» (Ալպոյաճյան, Պատմություն հայ Կեսարիո, Բ., էջ 1664)։ Կասկած չկա, որ այս բոլորի մեջ չկամ, չկաս, չկար զանազան խոնարհյալ ձևեր են կալ «կենալ» բայի, որից ածանցված է նաև կայ ու կու»²⁶։

Միջին հայերենում ներկայի և անկատարի մասնիկն է կու—ն, որ համախ հանդես է դալիս նաև առանց ու հնչյունի, ինչպես «Ցուցանէ առակս, թէ շատ մարդիկ կալուրին ի հետ մեղաց», «Եւ ես գիրկ առնէի զլուսնկան շուքն՝ բոնելի և ի վայր կիշնայի ի տունն և բան մի կասէի, որ ինչ գեղեցիկ դումաշ կայր ի տանն, նա ամէնն ինձ կերկնար» (Վ. Այգեկցի, էջ 298)։ Առանձին դեպքերում՝ այս կամ այն խոսվածքի ու>ոյ ընդհանուր հնչյունափոխությանը համապատասխան գտնում ենք նաև կոյ ձևով, ինչպես՝ «Այս քանի տարի կայ, որ կոյ վարեմ և կոյ վաստակիմ, զհատն դու կոյտես և զարդն ինձի կոյ կերցրենես» (անդ, էջ 155)։ Այս երևույթն ապացույց է, որ կոյ ոչ թե նախաձև է, այլ ու>ոյ հնչյունափոխության մեկ առանձին արտահայտությունը։ Այսպիսով, կու մասնիկի կիրառությամբ միջին հայերենում սահմանականի ներկան ու անցյալ անկատարը ձևով նույնացան նաև պայմանականի ձևերի հետ, ինչպես որ ժխտման դերբայի հարցը քննելիս օրինակ բերել ենք։ Գրաբարյան ներկան ու անկատարն արտահայտեցին ըզձականի ապառնի ու անցյալ ապառնի իմաստ, ինչպես՝ «Արի՛ք ի ծովափն իջնուն ու ձկներ բրնձնեմ վարրմով. Առնուն և ի տուն աւնիմ. խորովնեմ գինքըն կրակով» (Կ. Երզնկացի)։ Իսկ հարկադրականն արտահայտվեց սլիտի եղանակիչով կամ նրա հնչյունափոխված ձևերով, ինչպես՝ «Եւ ասաց դեն, թէ ես կերթամ ի յայս անուն թագաւորի դուստրն և ի բերանոյ աղջկան պիտի ասեմ, թէ զայս անուն մարդ բերեմ, որ ելնեմ. և երբ բերեն... ես պիտի փախչիմ» (Վ. Այգեկցի)։ Եվ կամ՝ «Ով աստի՛ն անարտար կացել, նա զգեկա՛յք» ձայնըն ալ լրսէ՛ (Հովհ. Երզնկացի)։

21 Տե՛ս նույն տեղում, էջ 77։

22 Տե՛ս Մ. Արեղյան. նշվ. աշխ., էջ 317։

23 Տե՛ս Ա. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 377։

24 Տե՛ս Ս. Անթոսյան, Կեսարիայի բարբառը, ապակետիպ, Երևան, 1961։

25 Ա. Այստեղյան, նշվ. աշխ., Քերականություն, էջ 77։

26 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 55-րդ լեզուների, հատ. IV, Ա, Երևան, 1959, էջ 397—398։

Միջին հայերենում անցյալ կատարյալի և հրամայականի վերջավորությունները ևս մեծապես փոփոխված են՝ զրաբարի համեմատ կատարված կերպի և սեռի ցուցիչի փոփոխություններին համապատասխան: Հայտնի է, որ զրաբարում ներգործական սեռի բայերի կրավորականությունը զրսևորման ամենատարբեր ձևեր ունի, այսպես՝ ներկայի հիմքից կազմվող ձևերից հիմնականում միայն Ն խոնարհման ներգործական սեռի բայերն են, որ կրավորական են դառնում ու>ր խոնարհիչ-սեռացուցիչների փոփոխությամբ, ինչպես՝ զրեմ—զրիմ—զրիցեմ, զրիցիմ—մի՛ զրեր, մի՛ զրիբ, մի՛ զրէք—մի՛ զրիք: Իսկ Ա խոնարհման պարզ բայերի՝ միայն ասպանին. աղայցեմ—աղայցիմ: Անցյալի հիմքից կազմվող ձևերում կրավորականությունն առավել հարուստ արտահայտություններ ունի: Կրավորական –այ, –աբ, –աւ վերջավորություններով անցյալ կատարյալում կրավորականություն են արտահայտում Ն խոնարհման (սլարզ և ածանցավոր), ինչպես նաև Ա և Ու խոնարհման սլարզ բայերը, ինչպես՝ զրեցի-զրեցայ, արկի-արկայ, աղացի-աղացայ, թողի-թողայ: Անցյալ կատարյալին հար և նման է 2-րդ ասպանին: Նշանակում է, ի տարբերություն ներկայի հիմքի՝ անցյալի հիմքից կազմվող կրավորականությունը զրսևորվում է ա վերջավորություն-սեռացուցիչի միջոցով: Նվ վերջապես, բոլորովին տարբեր է հրամայականի կրավորականի կազմությունը: Ն խոնարհման պարզ բայերի կրավորականությունն արտահայտվում է բայահիմքը շեշտված արտասանելով (զրեա՛ց, զորեա՛ց): Տրամաբանորեն՝ Ա խոնարհման պարզ բայերի համար ևս նման կրավորականություն կարելի էր ստանալ, սակայն գտնում ենք ի վերջավորություն-սեռացուցիչով կազմված ձև (աղացի՛ր): Կրավորականությունն այս նույն ձևով են արտահայտում նաև Ու խոնարհման սլարզ և 4 խոնարհումների բոլոր ածանցավոր բայերը (թողի՛ր, արկի՛ր, ուսի՛ր, գոհացի՛ր, զրօսի՛ր): Նզակիում ունեցած իրենց տարբերություններին հակառակ՝ հոգնակիում միատեսակ կրավորական են դառնում 4 խոնարհումների պարզ և ածանցավոր բոլոր բայերը՝ –այք, –աբուք վերջավորություններով: Այս բոլորից դուրս, զրաբարում կան նաև կրավորականության նկարագրական կազմություններ՝ առավելապես Նւ, լինել բայերի հարադրությամբ (եղեալ լե՛ր, ասացեալ է և այլն): Նզրակացությունը պարզ է. զրաբարում ոչ միայն կրավորականության զրսևորման հատուկ մասնիկ չկա, այլև տրամաբանական հետևողականությամբ զրսևորումների մի միասնական սկզբունք իսկ չկա. մի դեպքում կրավորականությունն արտահայտում է իմաստ, մի այլ դեպքում չի արտահայտում. այս կամ այն խոնարհման պատկանող բայն այսինչ ժամանակում ունի կրավորաձև զրսևորումներ, սակայն այլ ժամանակներում չունի: Մյուս կողմից՝ նույն բայի համար մի ժամանակում կրավորականությունը մի զրսևորում ունի, մեկ ուրիշ ժամանակում՝ այլ: Ավելին, հրամայական եղանակի հաստատական ձևերում կրավորականությունը զրսևորումներ ունի, սակայն ժխտական ձևերում չունի և այլն, և այլն: Մի խոսքով, ինչպես Ա. Այտրեյանն է ասում. «Գրաբարի մեջ յուրաքանչյուր բային, զոնե 12 ա՛նգամ՝ կրավորականն ու ներգործականը կնույնանան իրարու հետ, երբեմն նաև մինչև 30—40 անգամ»²⁷: Իսկ լեզվին բնականորեն հատուկ է պարզությունը: Պետք էր գտնել մի ձև, որ պարզություն մտցնեք ներգործաձև-կրավորաձև կազմության այս լաբիրինթոսի մեջ: Միջին հայերենը գտավ այդ ձևը՝ ու>վ մասնիկը, որն ի տարբերություն զրաբարի, զրվելով բառի վրա, արտահայտում էր բառափոխական, քերականական նշանակություն: Սա, անշուշտ, զրաբարյան –ուած վերջավորությամբ ավանդված գոյական և ածական անունների սև մասնիկն է, որ զրաբարում իսկ –ած վերջավորությամբ բառերի մեջ հանդիպելիս կրավորականություն արտահայտելու ներունակություն ուներ: Գրաբարում այս մասնիկը սեռի ցուցիչ չէր, և զրանով կազմված բառերն էլ բայաձևի ընկալում չունեին, այլ գոյական ու ածական էին: Միջին հայերենի շրջանում այս մասնիկն աշխուժացվեց, ընդհանրացավ և տարածվեց. զրվելով բայի սկզբնաձևի վրա՝ այնուհետև հանդես էր գալիս տարբեր ժամանակներում ու բայաձևերում: –վ մասնիկի տարածմամբ զրաբարյան կրավորաձև վերջավորություններն իմաստազրկվեցին: Միջին հայերենում –այ, –աբ, –աւ վերջավորություններն անցյալ կատարյալի վրա զրվելով այլևս բային կրավորականություն չէին հաղորդում. այսպես՝ Ն խոնարհման ածանցավոր բայերում այդ վերջավորություններն ընդհանրապես են, ինչպես՝ սերբ տեսայ, որ կու կախէր, զայլոց իրք այլ առի գերիսա (Ֆրիկ): Տես կրկու դաշտ տեսայ տափակ» (Ն. Շնորհալի): Մյուս կողմից՝ այս նույն վերջավորություններն են ստանում նաև չեզոք սեռի բայերը, մի բան, որ զրաբար լեզվամտածողությամբ անհնար էր պատկերացնել, ինչպես՝ «Դանակ առ զմորթն շրէ՛, թէ՛ չէ՛՝ Ելավ միսն ի բանէ» (Ն. Շնորհալի): Իսկ այս նշանակում էր, որ կրավորականություն արտահայտելու համար բայի վրա անպայմանորեն պետք է զրվեր վ մասնիկը: Հարց է առաջանում, իսկ ինչո՞ւ հատկապես –այ,

²⁷ Ա. Այտրեյան, Նշվ. աշխ., Քերականություն, էջ 69:

—աւ, —աւ վերջավորութիւնները տարածվեցին և խոնարհման ածանցավոր բայերի անցյալ կատարյալում։ Ուշադիր նայենք զրաբարի ածանցավոր բայերի անցյալ կատարյալին. Ի, Ա և Ու խոնարհումների ածանցավոր բայերը նման վերջավորութիւններ ունեն (սկսւայ, զարմացայ, գրօսայ)։ Նշանակում է՝ ընդհանրացման մի սովորական երևույթ է կատարվել։ Մեր կարծիքով, այս ընդհանրացմանը պետք է օգնած լինեն միջին հայերենում Ս խոնարհման ածանցավոր բայերի անցումը Ու խոնարհման (գտանել-գտնուլ, իջանել-իջնուլ)։ Բնական է, որ Ու խոնարհման փոխանցվելով՝ սրանք անցյալ կատարյալում չլին կարող այլ վերջավորութիւններ ունենալ, քան —այ, —աւ, —աւ, որոնք բուն Ու խոնարհման ածանցավոր բայերի վերջավորութիւններն էին։

Ընդհանրացման երևույթը տեղի ունեցավ և բուն հրամայականում։ Գրաբարում բուն հրամայականի եզակիում բայերը մեծ մասամբ —իւ վերջավորութիւն ունեն, այդ թվում նաև Ս խոնարհման ածանցավոր բայերի կրավորականը (արկի՛ր, հատի՛ր)։ Միջին հայերենի շրջանում այս վերջավորութիւնն անցավ Ս խոնարհման չեզոք սեռի բայերի վրա, ինչպես՝ «Եւ այրն ետես զսատանայ և ասաց, թէ՝ «Խաւի՛ր յաւգեթիւն» (Վ. Այգեկցի)։ Միջին հայերենի հետագա շրջանում —իւ վերջավորութիւնը ձևերը տարածվեցին նաև Ս խոնարհման բայերում, ինչպես՝ «Եկ ինձ մօտ Եստի՛ր» (Ն. Հովնաթան)։

Ս խոնարհման պարզ բայերում եւս է հնչյունափոխութիւնը (ինչպես՝ «Փոյթ աւձակէ՛ ղնա ի կապէ», «Դանակ առ զմորթըն շէջէ՛ ք») կրավորականութիւն իմաստավորումը խարխուլեց մի եղանակում, ուր երևույթի համայնապատկերը կարելի էր գտնել։

Ա խոնարհման պարզ բայերի ներգործածակ դրսևորումները բուն հրամայականում փոփոխութիւն չենթարկվեցին, քանի որ ընդհանրացող ձևերին անհարիր կազմութիւններ չունենին։ Իսկ ինչ վերաբերում է Ու խոնարհման բայերին. ապա պետք է ասել, որ նրանց ներգործածակ կազմութիւնները պահպանվեցին, սակայն կրավորական արտահայտութիւնները անգործածական դարձան։

Միջին հայերենում ուսումնասիրելը հանդես է գալիս նաև հենց անորոշում՝ ձևավորելով խոնարհման նոր ձևեր, ինչպես՝ ուտուիլ (= ուտվել), բոնուիլ (= բռնվել), ինչպես նաև ժխտական կազմութիւններում՝ չի վտնուիլ (= չի գտնվում), չուտուիլ (= չի ուտվում) և այլն, և այլն։

—Վ կրավորական մասնիկի կիրառութիւնը կրավորականի զրաբարյան նկարագրական կազմութիւնները եւ կորցրին իրենց իմաստը, ահա ինչու հանդիպում են բացուեալ է ձևով կազմութիւններ։

Այսպիսով, զրաբարում կրավորականի բազմապիսի ու բազմազան դրսևորումները պատճառ հանդիսացան, որ լեզուն գտնի ավելի ընդհանրական և միաձև արտահայտութիւն։ Դա ուսումնասիրելն էր, որ կրավորականի ներունակութիւնը սաղմնային վիճակում կար և զրաբարում։ Այս արժեքավորվեց, տարածվեց, ընդհանրացավ։ Գրաբարի կրավորական վերջավորութիւնները միջին հայերենն արժեքավորեց որպես զուտ ժամանակային վերջավորութիւններ՝ բայի կազմութիւնը համապատասխան։ Խոշոր բաժանումով՝ պարզ բայերն անցյալ կատարյալում ունեցան —ի, —եւ (—իւ)... վերջավորութիւնները, իսկ ածանցավոր բայերը՝ —այ, —աւ, —աւ վերջավորութիւնները, իսկ բուն հրամայականում տարածվեցին —իւ, —իւ վերջավորութիւնները։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻ

Ամ. Ամս., Անգ. Անպ.— Ամիրտովլաթ Ամասիացի, Անգիտաց Անպետ.

Ա. Այտընյան, Բեն. Բերակ.— Արսեն Այտընյան, Քենական Բերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի.

Գրգս., Քեն.— Գրիգորիս, Քենութիւն բնութիւն մարդո և նորին ցավոց.

Զ. Ազուլեցի— Զաքարիա Ազուլեցի, Օրագրութիւն.

Կ. Երզնկացի— Կոստանդին Երզնկացի, Բանաստեղծութիւններ.

Հովհ. Երզնկացի— Հովհաննես Երզնկացի, Բանաստեղծութիւններ.

Լ. Հերացի— Մխիթար Հերացի, Զերմանց մխիթարութիւն.

Ն. Շնորհալի— Ներսես Շնորհալի, Բանք չափավ.

Նղշ. Հովնթ.— Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծութիւններ.

Ն. Քուչակ— Նահապետ Քուչակ, Դիվան.

Սմ. Գունդս., Դատ.— Սմբատ Գունդստարլ, Դատաստանագիրք.

ՎԱ, Առական— Վարդան Այգեկցի, Ժողովածոյք առական Վարդանա, մասն Բ.

Չր. Դիվան— Չրիկ, Դիվան.